

ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ՋԱՐԴԵՐՈՒ 25-ԱՄԵԱԿ

Posted on March 1, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



Բողոքի Ցոյց Ատրպեյճանի Դեսպանատան Առջեւ, Պուլենոս Այրես

1 Մարտ 2013

✖ ՊՈՒԼԵՆՈՍ ԱՅՐԵՍ («Արմենիա» թերթ).- Հ.Յ.Դ. Արմենիա Երիտասարդական Միութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի

Երիտասարդներու կազմակերպութեամբ, Ուրբաթ, Մարտ 1-ի երեկոյեան բողոքի ցոյց մը տեղի ունեցաւ Արժանթինի մայրաքաղաք՝ Պուլենոս Այրեսի մօտ երեք տարի առաջ հաստատուած Ատրպեյճանի Դեսպանատան առջեւ, Սումկայիթի ջարդերու 25 ամեակի առիթով:

Բողոքի Ցոյց Ատրպեյճանի Դեսպանատան Առջեւ, Պուլենոս Այրես

1 Մարտ 2013

✖ ՊՈՒԼԵՆՈՍ ԱՅՐԵՍ («Արմենիա» թերթ).- Հ.Յ.Դ. Արմենիա Երիտասարդական Միութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի

Երիտասարդներու կազմակերպութեամբ, Ուրբաթ, Մարտ 1-ի երեկոյեան բողոքի ցոյց մը տեղի ունեցաւ Արժանթինի մայրաքաղաք՝ Պուլենոս Այրեսի մօտ երեք տարի առաջ հաստատուած Ատրպեյճանի Դեսպանատան առջեւ, Սումկայիթի ջարդերու 25 ամեակի առիթով:

Համախմբուած ցուցարարները, որոնց կարգին մեծ թիւով երիտասարդներ եւ հայ համայնքի անդամներ, ինչպէս նաեւ Մարդկային Իրաւանց արժանթինեան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, արդարութիւն պահանջեցին Ատրպեյճանի իշխանութեան՝ դատապարտելով 25 տարի առաջ կատարուած ողբերգալի իրադարձութիւնները, արդարութիւն եւ խաղաղութիւն պահանջելով Կովկասի շրջանին մէջ: Ատրպեյճանի կառավարութենէն նոյնպէս պահանջուեցաւ շրջանին մէջ պատերազմը վերակենդանացնելու սպառնալիքը դադրեցնել, եւ անոր կապակցաբար նաեւ վերջ տալ հայերու դէմ այլատեսաց եւ ցեղապաշտ դիքորոշումին, որու գագաթնակէտը հասաւ անցեալ տարի, երբ Ատրպեյճանի Նախագահ՝ Իլիամ Ալիեւ հրապարակայնօրէն յայտարարեց թէ «մեր թիւ մէկ թշնամիներն են համայն աշխարհի հայերը»:

Սումկայիթի կոտորածները տեղի ունեցան 1988 թուականի Փետրուար 26-էն 28, երբ տեղւոյն հայ բնակչութիւնը զոհ դարձաւ ատրպեյճանական իշխանութիւններու կողմէ դրդուած հայատեսաց քարոզչութեան: Սակայն այդ սարսափը շուտով տարածուեցաւ Ատրպեյճանի այլ քաղաքներ, որոնց կարգին Պաքու եւ Կիրովապատ: Իշխանութիւններու մեղսակցութեամբ, ոճրագործները հետեւեցան 1915 թուականին Թուրք-Օսմանեան կառավարութեան կողմէ գործադրուած Հայոց Ցեղասպանութեան ծրագրուած քայլերուն: Սումկայիթի ահաւոր դէպքերը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան ձայնը ճնշելու փորձ մը եղաւ: Սոյն կոտորածներու նախորդող օրերուն հայերը սովետական իշխանութիւններէն պահանջած էին ինքնորոշման իրաւունք եւ Լեռնային Ղարաբաղի կցումը՝ Հայաստանին:

